

«Կրկին եղաւ Մանուէլ Նահապետկոս որդոյ սպանեալ ի յանօրէնէ թվին ՌՄԾԶին (1807) եւ ապրիլի Բ. ին կատարեցաւ»։ (Ծախուած քարերէն)։

Թիւ 36. — «Այս է տապան հանգստեան Հայրապետին Դաւիթի կողակից Սիմային որ փոխեցաւ ի կեանս թուին ՌՄԺԹին (1770) նոյեմբերի»։

Թիւ 37. — «Այս է տապան հանգստեան Աստուածատուրի որդի Ակոբին որ փոխեցաւ թուին ՌՄԻին (1771)»։ (Վերի զրան իբր սանգուիի աստիճան գործածուած)։

Թիւ 38. — «Այս է տապան հանգստեան ուստա Աւետիսի կողակից Մարիամ խաթունի որ փոխեցաւ թուին ՌՄԼԳին (1784). կրկին ամբողջաւ մահտեսի Գրիգորին ՌՄԾԳ ին (1804)»։ (Իբր սալայատակ գործածուած դպրոցին շուրջ)։

Թիւ 39 Հանգիստ Տիրուհի ազնուհի Տիկնը՝ կողակից մեծապատիւ Գրիգոր աղայի Մեսրոպաւի»։

Թողեր զփառս երկրաւոր,
Առնուր ըզպըսակ երկնաւոր,
Բարեաց գործոց փոխարէն,
Տիեզերաց արարչէն,
Հանգեաւ ի նա ուրախ լէր,
Ով տիրուհի բարէսէր։
Յամի 1878 սեպտ. 19

(Հայոց նոր գերեզմանոցին մէջ)։

Թիւ 40. — «...կրկին աստ թաղեցաւ Աւետիքի դուստր Սիմա խաթունը որ փոխեցաւ թուին ՌՄԻԳ (1775) յունվար...անփոփեցաւ... ՌՄԻԱին (1792)»։

Թիւ 41. — «...կոչեալ մահտեսի Աւետիքի կողակից Լիա...թուին հայոց ՌՄԿԶ (1817) Դեկտեմբերի Բ.»։

Թիւ 42 «Գրիգոր աղային անուն Ստեփան, Մահտեսի Մանուկ աղայի է հանգչարան, Սլացեալ յերկրէ յամանի խորան, ի թուին ՌՄԶԳ (1834) ի փետրուար»։

Թիւ 43. — «Այս է տապան հանգստեան Երկրէն Համատան սա բուն վաճարական հանգուցեալ մահտեսի Ղայեամեան հանգուցեալ տէր Առաքել քահանային որ փոխեցաւ առ Քրիստոս թվին ՌՄԾԶին (1807) մայիս Ժ.ին»։

Թիւ 44. — «Այս է տապան հանգստեան Շոռոթեցի դուստր Յոռուսինա որ փոխեցաւ ի կեանս Ռ...»։

«Կրկին եղաւ աստ մահտեսի Ստեփանի կողակից մահտեսի Մարիամին որ փոխեցաւ ՌՄՀԲ (1823) յուն 28»։

Թիւ 45. — «Վարդան ՌՄԿԲին (1813) մայիսի ԻԵ.ին»։ (Ունի նաեւ երկայն և անմեկնելի գրութիւն մը)։

Թիւ 46. — «Այս է տապան հանգստեան մահտեսի Ստեփանի ամիրային դուստր...խաթունին որ փոխեցաւ թվին ՌՄ...ապրիլի 6ին»։

Թիւ 47. — «Այս է տապան հանգստեան Ղազարի կողակից մահտեսի Կիւլիկ խաթունի որ փոխեցաւ ի թվին հայոց ՌՄԶ (1831) սեպտ. 25»։

Թիւ 48 «Այս է շիրիմ տեղ հանգստի, Մարմնոյ մարդոյ աստ գրաւի,
Մնայ յայսմ պահարանի,
Մինչ ի յաւուր դատաստանի,
Գաբրիէլեան փողն հնչի,
Նորոգեցի որպէս արծուի,
Սա որդի էր պարոն Աւետիքի,
Պատմաճի մահտեսի Ստեփանի,
Որ փոխեցաւ ի չափ հասակի,
Որք հանդիպիք տուք զողորմի»։

Թուին Հայոց ՌՄԻԲ (1803) մարտի Ա.ին»։

Թիւ 49 «Շիրիմս դըպիր հայրապետի,
Լեալ հեզ որդի Աւետիքի,
Շրջեալ վաճառս ճանապարհի,
Կարօտ և զգացն յանկարծ փոխի,
Գոլով պարկեշտ ու զովելի,
Ժրտէ պաղատաձայն հայր մեր մի»։
«Թուին ՌՄԺԼ 1769 սեպ. Ի.ի»։

(Այս և թիւ 48ը և թիւ 50ը գտայ գրուած կտոր մը թուղթի վրայ, Ս. Գէորգ եկեղեցւոյ թուղթերուն մէջ ուր կը յիշուէր թէ այս քարերը աղբիւրի կոնքի գործածուած են)։

Թիւ 50 «Որ վասն անչափ սիրով քոյն,
Բանդ կամէ տոնր մարմին,
Բեկեղիք ... կենաց փայտին,
Շիրիմս այս հարկ հողային,
Մեծաւ պատուով մարմին,
Աղաչանօք Սրբոյ խաչին,
Մաղթեա ով սուրբ աստուածածին,
Թողուլ զմեզս անձանց նորին,
Տէր Աբրահամ քահանային,
Եկեղեցւոյս հոգին գրախտին,
Զի հոգւով Զ ամի այս սուրբ խաչին,
Աշխատ եղև լուսահոգին,
Որք ընթեռնուք յօժարագին,
Լիով սրաիւ տաք զողորմին»։

Թիւ 51. — «Այս է տապան հանգստեան մահտեսի Գարութիւնի որդի Խաչատուրին առ Աստուած փոխեցաւ թվին ՌՄԻԵ (1796) նոյեմբերի Ա.ին»։ (Վարի զրան աջ կողմը)։

Թիւ 52. — «Այս է տապան հանգստեան մահտեսի